ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ԻՐԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆԸ

Փետրվարի 1-ին Ն .Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Հայաստանի Ազգային պատկերասրահ՝ իր օրհնությունը տալու Հայաստանում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ իրանական մշակույթի ցուցահանդեսի բացմանը՝ նվիրված ԻԻՀ հեղափոխության 23-րդ տարեդարձին:

Նորին Սրբությունը ուրախություն հայտնեց, որ երկու հարևան ժողովուրդների և երկրների միջև զարգանում են դարավոր բարեկամական կապերը՝ արդյունավորվելով մշակութային նման ձեռնարկումներով, ինչպես նաև բարձր մակարդակների հանդիպումներով:

Բացման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը շրջեց ցուցասրահներով, ծանոթացավ իրանցի վարպետների փորագիր և գեղանկար աշխատանքներին:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը, ԻԻՀ դեսպան Մուհամադ Ֆարհադ Քոլեյնին, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագետներ, մշակույթի գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ